ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2012 թ. N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ,,ԻՋԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՋ 21213 ՄԱԿՆԻՇԻ 088 ԼՍ 57 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Բաժնետիրական ընկերությունների մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ,,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին'' ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի ,,ժբ'' ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով ,,Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2011թ. դեկտեմբերի 13-ի թիվ 158 գրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Թույլատրել ,,Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերությանը աճուրդային կարգով օտարելու ընկերության հաշվեկշռում գտնվող ՎԱՋ 21213 մակնիշի 088 ԼՍ 57 պետհամարանիշի, 1994 թվականի արտադրության ավտոմեքենան:
2. Ընկերության տնօրենին՝ հիմնական միջոցի օտարումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մարզպետարանի ներկայացուցչի մասնակցությամբ:
3. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. հունվարի 24
Ք. Իջևան